Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է **գնահատող հանձնաժողովի** գործողությունների (անգործության) և **որոշումների** բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Աննարկա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևան>> բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ <<ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-3>> ծածկագրով էլեկտրոնային գնումների e-AUCTION համակարգի միջոցով իրականացվող էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի՝ 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչված <<Աննարկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 27.08.2024 թվականի թիվ 6 արձանագրությամբ որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել <<ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-3>> ծածկագրով էլեկտրոնային գնումների e-AUCTION համակարգի միջոցով իրականացվող էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի՝ 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչված <<Աննարկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 27.08.2024 թվականի թիվ 6 արձանագրությամբ որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am